



California's protection & advocacy system
Toll-Free (800) 776-5746

Իմ պարտականությունները որպես հավելյալ ապահովության եկամտի շահառուների կազմակերպչական ներկայացուցիչ վճարող. Լավագույն պրակտիկ ուղեցույց

Հոկտեմբեր 2018 հրատարակչություն: #5562.10 - Armenian

Որպես ներկայացուցիչ վճարող՝ Դուք պարտավոր եք գործել՝ ելնելով շահառուների շահերից, որոնց ծառայում եք:¹ Ներկայացուցիչ վճարողի երեք կարևորագույն պարտականություններն են՝ գումարի կառավարում, հաշվառում և հաշվետվությունների ներկայացում, ինչպես նաև պաշտպանություն:

I. Գումարի կառավարում

Որպես ներկայացուցիչ վճարող՝ Դուք պետք է օգնեք հաշվառուին գումարի կառավարման հարցում: Սա նշանակում է, որ Դուք պետք է օգնեք նրանց՝ ուղղել իրենց եկամուտն այնպես, որ լավագույնս ծառայի

¹ 20 CFR § 416.635; SSA POMS GN 00502.114 («ԾԳԶԶ»-ն (ծրագրային գործողությունների ձեռնարկային համակարգ) ձեռնարկ է, որն օգտագործվում է Սոցապ կառավարման (ՍԱԿ) անձնակազմի կողմից՝ բացատրելու համար, թե ինչպես է պետք հետևել սոցիալական ապահովության կանոններին:) Կարող եք տեսնել դրանք՝ <https://secure.ssa.gov/poms.nsf/home!readform>: (Վերադառնալ հիմնական փաստաթղթին)

իրենց նպատակներին: Դուք պետք է տեղյակ լինեք, թե ինչպես է շահառուն ծախսում իր գումարը: Մա ներառում է գումարի այլ աղբյուրներ, եթե դրանք կան, ինչպես նաև ընթացիկ և ապագա վճարումները: Մա թույլ կտա Ձեզ կառավարել շահառուի հավելյալ ապահովության եկամուտը² (ՀԱԵ) կամ XVI վերնագրի ներքո նշված ֆոնդերը այնպես, որ բավարարվեն շահառուի հիմնական պահանջները՝ միննույն ժամանակ տնտեսելով բավարար գումար ֆոնդերի և խնայողությունների համար:³ Մա նաև կօգնի զերծ մնալ հավելյալ վճարումներից:

Գումարի արդյունավետ կառավարման օրինակ

Յուրաքանչյուր ամիս Մեմը ստանում է 1100 դոլար որպես ՀԱԵ: Նրա բնակության վարձը և կոմունալ վճարումները կազմում են ամսական 500 դոլար: Նա նաև հաճախում է գիշերային դպրոց, որտեղ սովորում է էլեկտրիկի մասնագիտությամբ: Շուտով ձմեռ է: Մեմի ծնողները Հավայան կղզիներում են: Մեմն ապրում է Կալիֆոռնիայում և շատ է ցանկանում տեսնել իր ծնողներին: Մեմը ունի շաքարային դիաբետ: Նրա ներկայացուցիչ վճարողը Ֆրենկն է, ով աշխատում է Homestead Rep. ընկերությունում: Վճարող բաժնետիրական ընկերություն:

Ներկայացուցիչ վճարողը կարող է կատարել հետևյալ քայլերը՝ ի պաշտպանություն Մեմի.

Ֆրենկը հաճախ Մեմի հետ խոսում է իր բյուջեի մասին: Ամեն անգամ, երբ Մեմը ստանում է ՀԱԵ-ի կանխավճարներ իր բանկային հաշվին, Ֆրենկը դրանք օգտագործում է Մեմի բնակության վարձն ու կոմունալ

² Այս հրապարակումը կենտրոնանում է ՀԱԵ-ի ստացողների իրավունքների վրա: Եթե ներկայացուցիչ վճարողը կառավարում է հաշմանդամների սոցիալական ապահովագրության (ՀՄԱ) կամ միաժամանակ նաև հավելյալ ապահովագրության եկամուտների ծախսերը, ապա կարևոր է իմանալ դրանց կանոնների տարբերությունները: Երբեմն ՀՄԱ կանոններն առավել ճկուն են, քան ՀԱԵ կանոնները: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

³ 20 CFR § 416.645 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

վճարումները կատարելու համար և հոգ է տանում այդ ամսվա նրա առողջական կարիքների մասին: Ֆրենկը և Սեմը պայմանավորվել են, որ ամեն ամիս խնայելու են 100 դոլար, որպեսզի կարողանան գնել Հավայան կղզիներ մեկնելու տոմս՝ այցելելու իր ծնողներին: Ֆրենկը հարցնում է Սեմին, թե արդյոք վերջինիս համար պետք է գնել տաք ձմեռային շորեր գալիք ձմռանն ընդառաջ: Ֆրենկը Սեմին տանում է մոտակա հագուստի խանութ և օգնում Սեմին, որ կարողանա զեղչով մի լավ վերարկու գնել:

Սեմի հաշվեկշիռը ստուգելուց հետո Ֆրենկը հասկանում է, որ այս ամսվա նրա ծախսերը գերազանցում են սահմանաչափը: Ֆրենկը զանգահարում է Սեմին և հարցնում՝ կարելի է մի քիչ հավելյալ ծախսերի համար նախատեսված գումարից հատկացնել գիշերային դպրոցի վարձի վճարման համար: Ֆրենկը բացատրում է Սեմին, թե ինչու է անհրաժեշտ վճարել ուսման վարձը անգամ եթե Սեմի հաշվին այլևս գումար չմնա, որպեսզի հետագայում խուսափեն կրկնակի վճարումներից:

Այնուհետև Ֆրենկը Սեմին տալիս է 100 դոլար իր անձնական և պատահական ծախսերի (ԱՊ ծախսեր) համար: Սեմը սիրում է ծախսել իր ԱՊ գումարները քաղցրավենիք գնելու համար: Քաղցրավենիքը բարձրացնում է արյան մեջ նրա շաքարի մակարդակը: Այնուամենայնիվ, Ֆրենկը գիտի, որ եթե Սեմին տալիս է ԱՊ ծախսերի գումար, ապա չի կարողանալու ստիպել Սեմին, որ քաղցրավենիք չգնի: Փոխարենը Ֆրենկը հանդիպում է Սեմին և բացատրում, թե ինչ վատ հետևանքներ կարող է ունենալ քաղցրավենիքը իր իսկ առողջության համար: Ֆրենկը և Սեմը պայմանավորվում են կրճատել ԱՊ ծախսերը և խնայել մնացած գումարը, որպեսզի Սեմը կարողանա իր համար քաղցրավենիքի փոխարեն գնել նոր մահճակալ:

a. Գումարի օգտագործումը շահառուի կարիքները հոգալու համար

Որպես ներկայացուցիչ վճարողի՝ Ձեր հիմնական պարտականությունն է՝ օգնել շահառուին բավարարել իր հիմնական կարիքները:⁴ Այս

⁴ 20 CFR § 416.640 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

կարիքների մեջ են մտնում տնային տնտեսությունը, սնունդը, հագուստը, առողջությունը և հարմարությունները: Օգտագործե՛ք ՀԱԵ ֆոնդի գումարը առաջին հերթին նման բաների համար, իսկ այնուհետև ուղղեք այդ գումարը շահառուի այլ, օրինակ՝ պարտավորավճարների վճարման համար:⁵ Եթե մնում է չծախսված գումար, Դուք պետք է իմանաք շահառուի կարծիքը, թե ինչպես է նա ուզում ծախսել այդ գումարը: Մնացյալը կարող եք օգտագործել այլ նպատակներով: Սրա մեջ կարող են մտնել հավելյալ հարմարությունները, ճանապարհորդությունը, բժշկական ավելի շատ ծառայություններ, ծառայություններ, որոնք կօգնեն շահառուին լինել ավելի անկախ, զվարճանքի և խնայողությունների համար նախատեսված գումարները:

Ներկայացուցիչ վճարողը պետք է կարողանա գտնել եղանակներ, որոնց օգնությամբ կկարողանա խնայել շահառուի գումարը: Օրինակ՝ Դուք կարող եք օգնել շահառուին նվազեցնել բնակության վարձը կամ գտնել ավելի մատչելի վարձավճարով բնակարան: Դուք կարող եք նաև գտնել զեղչով ապրանքներ, ինչպիսիք են, օրինակ, նպարեղենը և հագուստը:

Շահառուի հետ միասին կազմե՛ք ծախսերի ցուցակ, որի մեջ կմտնի նրա կարիքների համար անհրաժեշտ գումարը՝ ներառյալ ԱՊ ծախսերի համար նախատեսված գումարը:⁶ Դուք կարող եք շահառուին հանձնել իր ԱՊ ծախսերի համար նախատեսված գումարը ցանկացած եղանակով, սակայն հիմնականում դա արվում է կանխիկ գումարի տեսքով:

⁵ 42 U.S.C. § 407; 20 CFR § 416.640(d) ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

⁶ «Անձնական կարիքների նպաստը» մի տերմին է, որն օգտագործվում է երկրարաժամկետ պայմաններով խնամք իրականացնող հաստատություններում բնակություն հաստատած շահառուների առնչությամբ: Այնուամենայնիվ, տերմինը կարող է օգտագործվել նաև համայնքներում ապրող շահառուներին տրված գումարի առնչությամբ: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Խոսե՛ք շահառուի հետ այն մասին, թե երբ և ինչպես է նա նախընտրում ստանալ իր ԱՊ ծախսերի համար նախատեսված գումարը: Որոշ ներկայացուցիչ վճարողներ ԱՊ ծախսերի համար նախատեսված գումարը տալիս են ամսվա սկզբում, շաբաթը մեկ կամ ամեն օր փոքր մասերով:

Եթե Դուք շահառուին եք հանձնում ԱՊ ծախսերի գումարը, ապա պետք չէ ասել, թե ինչպես ծախսի գումարը: Դուք չպետք է շահառուին ստիպեք, որպեսզի նա ներկայացնի իր ծախսերը կամ տրամադրի անդորրագրեր, անգամ եթե Ձեզ դուր չի գալիս, թե նա ինչպես է ծախսում իր գումարը:

b. Հաղորդակցություն

Շահառուի ՀԱԵ-ի կառավարման հարցում օգնելու համար լավագույն եղանակը նրանց հետ այդ թեմայով հաճախակի խոսելն է: Սա նշանակում է, որ Դուք պետք է շահառուի հետ կապի դուրս գաք առնվազն 2 շաբաթը մեկ անգամ: Կապվեք հաշվառուի հետ, անգամ եթե նա կապի դուրս չի գալիս Ձեզ հետ: Եթե շահառուն համաձայն է, Դուք կարող եք սկսել աշխատել շահառուի սոցիալական աշխատողի կամ ծառայություններ մատակարարող աշխատակցի հետ և ինքներդ կատարեք այդ բոլոր ծախսերը: Սրանք կարող են ներառել ինչ-որ թերապիաներ, որոնք կօգնեն նրանց, օրինակ, ինչ-որ կարողություններ ձեռք բերել: Հաճախ խոսե՛ք Ձեր շահառուի հետ՝ հասկանալու համար, թե ինչ է նրանց անհրաժեշտ և թե ինչպես են նրանք ցանկանում ծախսել իրենց գումարը:

Շահառուի հետ խոսելիս անպայման խոսեք նաև հաշվի մնացորդի մասին: Դուք նաև պետք է իմանաք՝ արդյոք իրենց հարմար է այն եղանակը, որով Դուք կատարում եք գումարային փոխանցումները: Դուք շահառուից պետք է իմանաք նաև նրանց եկամտի այլ աղբյուրների, օրինակ՝ աշխատավարձի, ժառանգության կամ նվիրատվությունների մասին: Դուք չեք ցանկանում ծախսել ողջ ամսական եկամուտը կամ էլ

դրանից շատ: Եթե Դուք գերազանցում եք ամսական ծախսերը, ապա սոցալ. կառավարման ծրագիրը կարող է կրճատել Ձեր եկամուտները:

Ճիշտ հաշվետվությունների ներկայացումը շատ ավելի կարևոր է այն անձանց համար, ովքեր ստանում են ՀԱԵ: Այն թե, արդյոք անձը ստանում է ՀԱԵ կամ թե ինչքան է ստանում, կախված է այն բանից, թե որքան եկամուտներ ու ռեսուրսներ ունի նա: Սոցալ. կառավարման ծրագիրը իրավունք ունի գումար չհատկացնել շահառուին այն ամիսների համար, որոնց ընթացքում նա ստացել է գումարը ու գերազանցել ծախսերը:⁷ Եկամուտը պահպանելու և կրկնակի վճարումներից խուսափելու համար իմացե՛ք, թե որքան գումար և ռեսուրսներ ունի շահառուն: Նման կերպ Դուք կկարողանաք կառավարել նրա ՀԱԵ-ն և սոցալ. կենտրոնին տեղեկացնել փոփոխությունների մասին:

Եթե շահառուն ստացել է եկամուտներ կամ ռեսուրսներ, որոնք գերազանցում են սահմանաչափը, ապա պետք է օգնել նրան ծախսել գումարը: Հարցրե՛ք՝ արդյոք շահառուն ցանկանում է գումարը տրամադրել պարտավորավճարների կամ այլ վճարումների համար: Նրանք կարող են ավելի մեծ ծախսեր անել, քանի որ, օրինակ, ստացել են

⁷ Ռեսուրսների առավելագույն չափն է 2 000 դոլարը մեկ անձի կամ 3 000 դոլարը զույգի համար, թեև հաշվելի ռեսուրսների դեպքում գործում են բացառություններ: Առավելագույն եկամտի սահմանաչափը սահմանումը շատ դժվար է, քանի որ այն փոփոխվում է տարեցտարի և մեծապես կախված է եկամտի աղբյուրից և շահառուի բնակության պայմաններից: Որոշ նահանգներ, որոնց թվում Կալիֆորնիան, մատակարարում են հավելյալ եկամուտներ: Կան շատ բացառություններ: Դրա համար անհրաժեշտ է այցելել [ungաալ. կառավարման կայքէջ՝](http://www.socialsecurity.gov/policy/docs/quickfacts/prog_highlights/) առավելագույն եկամտի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար: http://www.socialsecurity.gov/policy/docs/quickfacts/prog_highlights/ (Վերադառնալ հիմնական փաստաթղթին)

միանվագ վճար: Ձեր՝ որպես ներկայացուցիչ վճարողի պարտականությունները կարող են փոփոխվել՝ ըստ ֆոնդի աղբյուրների:⁸ Ամեն դեպքում Դուք պետք է սոցապ. կառավարման կենտրոն ներկայացնեք Ձեր հաշվետվությունը: Դուք պետք է վերահսկեք միանվագ վճարները, եթե դրանք հետադարձ ՀԱԵ վճարումներ չեն: Ոչ ՀԱԵ-ային միանվագ վճարումների դեպքում, ինչպիսին է ժառանգությունը, Դուք պետք է աշխատեք շահառուի հետ և նրա համաձայնությամբ (այս շրջանակներում ներգրավված այլ անձանց առկայության դեպքում նաև նրանց) գումարը ծախսեք առավելագույնս արդյունավետ: Օրինակ՝ Դուք կարող եք պատվիրել սգո ծառայություններ: Դուք կարող եք աշխատել այնպիսի մարդու հետ, ով կարող է ներկայացնել հատուկ կամ հավելյալ կարիքներ, որոնց ծախսերը չեն արվում եկամտի գումարի հաշվին:⁹

II. Հաշվառման և հաշվետվությունների ներկայացման պարտավորություններ

Ներկայացուցիչ վճարողը պետք է քաջատեղյակ լինի շահառուի ծախսերից: Վճարողը նաև պետք է ներկայացնի հաշվետվություններ սոցապ. կառավարման գրասենյակ՝ խնդիրների կամ փոփոխությունների դեպքում: Արդյունավետ հաշվապահական համակարգի առկայության

⁸ Դուք կարող եք վճարումների մասին հավելյալ ինֆորմացիա գտնել՝ [անցնելով հետևյալ հղմամբ՝](https://www.disabilityrightsca.org/system/files/file-attachments/560401.pdf)
[https://www.disabilityrightsca.org/system/files/file-attachments/560401.pdf:](https://www.disabilityrightsca.org/system/files/file-attachments/560401.pdf)
[\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

⁹ Դուք պետք է կապվեք իրավաբանի հետ, ով մասնագիտացած է հատուկ կարիքների խնամառության գործում, որպեսզի ներկայացնեք խնամառության հանձնված գույքը՝ պաշտպանելու ՀԱԵ-ն: Կախված ֆոնդի աղբյուրներից՝ կան մի քանի հատուկ պայմաններ, ըստ որոնց որոշվում է, թե ով է հանձնառու նման խնամառություն կազմելու համար: Տես՝ 42 U.S.C. Sec: 1396p(d)(4)(A) [\(Վերադառնալ հիմնական փաստաթղթին\)](#)

դեպքում Դուք կարող եք վստահ լինել, որ սոցապ. կառավարությանը ներկայացրած տարեկան հաշվետվությունը լիարժեք է: Սա մեկ այլ եղանակ է՝ տեղեկանալու շահառուի ֆինանսական կարիքների մասին: Ֆինանսներին հետևելը թույլ կտա Ձեզ ներկայացնել գրավոր ապացույց, եթե սոցապ. կառավարման գրասենյակը որոշում կայացնի աուդիտի ենթարկել Ձեզ: Այն օգնում է նաև այնպիսի հարցերում, երբ շահառուն չի համաձայնում սոցապ. կառավարության գրասենյակի ներկայացրած պահանջների հետ:

a. Գրանցումներ

Եթե Դուք շահառուի գումարը պահում եք բանկային հաշվի վրա, Դուք պետք է ունենաք Ձեր սեփական գրանցամատյանը, որպեսզի հետևեք գումարային գործառնություններին: Այն պետք է պարունակի ընթացիկ հաշվի, կանխավճարների ու կանխիկացումների մասին տվյալներ: Դուք չպետք է հիմնվեք բանկի տրամադրած տվյալների վրա: Յուրաքանչյուր կանխիկացման դեպքում պետք է նշված լինեն նպատակը կամ կանխավճարների աղբյուրը:

Ձեզ հետ պետք է լինի նաև երրորդ անձ, որը կհամեմատի բանկի կողմից տրված տվյալները գրանցամատյանում գրված տվյալների հետ և ստորագրի յուրաքանչյուր ստուգված փաստաթղթի տակ: Մարդիկ, ովքեր անընդհատ չեն զբաղվում այս գործով, ավելի ուշադիր են և կարող են գտնել սխալներ:

Բոլոր ծախսերի անդորրագրերը պետք է պահպանվեն և նշվեն գրանցամատյանում, բացի այն գումարներից, որոնք նախատեսված են շահառուի ԱՊ ծախսերի համար: Ստուգող անձնակազմին տրամադրեք բոլոր անդորրագրերը:

Ներկայացուցիչ վճարողը պետք է ունենա մեկ այլ գրանցամատյան, որտեղ կգրանցի շահառուի ԱՊ ծախսերը և այն ամբողջ գումարի չափը, որը տրամադրվել է այդ նպատակով: Գրանցամատյանում պետք է

նշված լինեն տրված գումարի չափը, նպատակը, օրը և ժամը, ԱՊ ծախսերի համար նախատեսված մնացած գումարը և շահառուի ստորագրության տեղ յուրաքանչյուր անդորրագրի վերջում: ԱՊ ծախսերի համար նախատեսված կանխիկ գումարը պետք է պահվի փակի տակ: Նաև, երբ Դուք տալիս եք ԱՊ ծախսերի համար նախատեսված կանխիկ գումար, Դուք պետք է նաև հետևեք, թե յուրաքանչյուր անգամ ինչ նպատակով է այն ծախսվում:

b. Սոցապ. հաշվետվություններ

Ամեն տարի վճարողը պետք է շահառուի եկամուտների մասին հաշվետվություն ներկայացնի սոցապ. կառավարման կենտրոն:¹⁰ Դուք պետք է Ձեր հաշվետվության մեջ ներկայացնեք ցանկացած բան, որ անմիջականորեն մտնում է շահառուի իրավասությունների մեջ: Սա իր մեջ ներառում է ցանկացած ծախս՝ կապված շահառուի կենսամակարդակի հետ, աշխատանքի, ուսման, եկամուտների, առողջական վիճակի, ամուսնական կարգավիճակի կամ ԱՄՆ-ից դուրս կատարած ուղևորությունների հետ, որոնք տևում են մեկ ամսից ավել:¹¹ Այս ամենն արվում է կրկնակի վճարումներից խուսափելու համար: Սոցապ. կառավարման կենտրոնը կարող է համապատասխանեցնել գումարի չափը կամ դադարեցնել վճարումները, եթե Դուք հաշվետվությունները ներկայացնեք ժամանակին:

Դուք պետք է տեղյակ պահեք նաև այն մասին, եթե Ձեր կազմակերպությունն այլևս անկարող է շարունակել իր պարտականությունների կատարումը որպես ներկայացուցիչ վճարող: Մրանք կարող են կապված լինել առողջական վիճակի, գործազրկության, սնանկության, կառավարման անկարողության հետ կամ պարզապես

¹⁰ 20 CFR § 416.665 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹¹ POMS SI 02301.005 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

այն դեպքում, եթե Դուք այլևս չեք ցանկանում շարունակել զբաղվել նման գործունեությամբ:¹²

Սակայն ամեն դեպքում վճարողը պետք է օգնի շահառուին՝ գտնել իր համար նոր վճարող կամ օգնել սովորել կառավարել սեփական ծախսերը: Դուք եք որոշում՝ գումարի մնացորդները հանձնել նոր ներկայացուցչին, թե հանձնել դրանք սոցապ. կառավարման կենտրոն, եթե մոտ ժամանակներում նոր ներկայացուցիչ չգտնվի: Այս դեպքում սոցապ. կառավարման կենտրոնը հանդես կգա ժամանակավոր ներկայացուցիչ դերում:¹³ Եթե սոցապ. կառավարման կենտրոնի կարծիքով վճարված գումարի չափը չափազանց մեծ է, այն կարող է պահել եկամուտների մի մասը՝ մնացած ծախսերը լրացնելու նպատակով:

Եթե հնարավոր է, ծանոթացեք տեղի սոցապ. կառավարման կենտրոնի կառավարչի հետ: Սա կարող է օգնել արագացնել այս գործընթացները: Սա կարող է նաև օգնել լուծել շահառուի ՀԱԵ-ի հետ կապված խնդիրները:

III. Պաշտպանություն

Լինել ներկայացուցիչ վճարող՝ չի նշանակում լինել ընդամենը վստահված անձ: Սա նաև նշանակում է, որ Դուք պետք է ստանձնեք շահառուի ՀԱԵ-ն պաշտպանելու պարտականությունը:¹⁴ Եթե շահառուն ստանում է նամակ իրենց իր իրավասությունների կամ եկամտի չափի փոփոխությունների մասին, Դուք պետք է օգնեք նրան կապվել սոցապ. կառավարման գրասենյակի հետ: Սա նրանց օգնում է այլ հիմնադրամներ գտնելու գործում: Դուք, իսկապես, կրում եք շատ մեծ պատասխանատվություն, եթե սոցապ. կառավարման գրասենյակը

¹² POMS GN 00502.114 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹³ 20 CFR 416.611 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁴ POMS GN 00502.114 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

գտնում է սխալներ այն ընթացքում կատարված վճարումների մեջ, երբ շահառուի գումարը տնօրինել էք Դուք:¹⁵ Պաշտպանել շահառուին՝ նշանակում է օգնել նրանց ներկայացնել ճիշտ փաստեր, եթե կան անհամաձայնություններ սոցալ. կառավարման գրասենյակի հետ: Սա նաև նշանակում է, որ Դուք պետք է միասին գնաք սոցալ.

կառավարման կենտրոնի կամ վարչական իրավունքի դատավորի (ՎԻԴ) հետ հանդիպումների և մասնակցեք քննարկումների: Դուք կարող եք օգնել նրան՝ բացատրելու իր դեպքի մանրամասները: Դուք պետք է միշտ հարցնեք շահառուին՝ արդյոք նա ունի Ձեր կարիքը սոցալ.

կառավարման կենտրոնի հետ խնդիրների լուծման հարցում:

a. Սոցալ. կառավարության նամակ

Դուք կստանաք նամակ, որումն նշված կլինեն բոլոր այն կետերը, որոնք առնչություն ունեն շահառուի հետ:¹⁶ Բացեք նամակներն անմիջապես դրանք ստանալուց հետո: Դուք պարտավոր եք արագ արձագանքել:

Օրինակ՝ եթե շահառուն ստանում է նամակ այն մասին, որ սոցալ.

կառավարման կենտրոնը փոխանցել է չափազանց շատ գումար **Դուք պետք է տեղեկացնեք 10 օրերի ընթացքում՝** արդյոք ուզում եք, որ փոխանցվող գումարի չափը մնա անփոփոխ: Սոցալ. կառավարման

¹⁵ Որպես ներկայացուցիչ վճարող Դուք պետք է պատասխանատու լինեք շահառուին ներկայացրած ցանկացած տուգանքի կամ հավելյալ վճարումների համար, եթե Դուք չեք կարողացել ճիշտ կազմակերպել ֆինանսական միջոցների կառավարումը: 20 CFR § 416.552; POMS SI 02201.020 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁶ POMS SI 02302.310 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

կենտրոնը միանգամից չի կրճատի հետագա վճարումները:¹⁷ Հակառակ դեպքում նամակը կկոչվեր Ծանուցում հավելավճարի մասին: Մեկ այլ օրինակ է Հաշմանդամության շարունակական ստուգումը (ՀՇՍ):

Սոցապ. կառավարման կենտրոնը մշտապես անցկացնում է այս ստուգումները շահառուների շրջանում: Սա օգնում է հասկանալ՝ արդյոք անձը դեռևս ունի հաշմանդամություն:¹⁸ Շահառուն պարտավորվում է ներկայացնել ապացույցներ իր հաշմանդամության վերաբերյալ, որպեսզի շարունակի ստանալ օգնություն: Այս գործողություններն ունեն ժամկետներ: Դուք չեք ցանկանում ստանալ նման ծանուցումներ, եթե դրանք արդեն սահմանված են:

b. Բողոքարկման որոշումներ

Դուք կարող եք բողոքարկել այն որոշման դեմ, որը դեմ է շահառուի շահերին, եթե ժամկետը դեռ չի լրացել: Օրինակ՝ Դուք կարող եք բողոքել այն դեպքում, երբ սոցապ. կառավարման կենտրոնը պատրաստվում է կրճատել վճարվող գումարի չափը կամ առհասարակ դադարեցնել վճարումները: Դուք կարող եք նաև բողոք ներկայացնել, եթե շահառուին չի թույլատրվում դառնալ իր սեփական ծախսերի տնօրինողը:

Բողոքարկման առաջին փուլը վերանայման պահանջի ներկայացումն է: Դուք պետք ներկայացնեք Ձեր բողոքը որոշումը կայացնելուց հետո 60 օրերի ընթացքում: Դուք կարող եք մի փոքր ժամանակ շահել, եթե

¹⁷ POMS SI 02220.010A.5.a: Այնուամենայնիվ, 10-օրյա ժամկետը կարելի է երկարաձգել, եթե Դուք ներկայացնեք հարգելի պատճառ Ձեր ուշացման համար: POMS SI 02220.010A5.b ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

¹⁸ POMS DI 28001.003 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

ներկայացնեք ուշացման հարգելի պատճառներ:¹⁹ Բողոքը կարող է ներկայացվել նամակի կամ առկա ձևաթղթի օգնությամբ:²⁰ Երբ լրացնում եք բողոքի ձևաթուղթը, Դուք կարող եք նշել՝ արդյոք Դուք ցանկանում եք հարցի վերանայում, ոչ պաշտոնական խորհրդակցություն, թե պաշտոնական խորհրդակցություն: Հարցի վերանայումը նշանակում է, որ անձը, որը վերանայելու է Ձեր հարցը, կարդալու է միայն գրավոր ապացույցը, որը ներկայացվել է սոցապ. կառավարման կենտրոն:²¹ Ոչ պաշտոնական կամ պաշտոնական խորհրդակցությունները Ձեզ հնարավորություն են տալիս անձամբ հանդիպելու այս հարցերով զբաղվող գրասենյակի սոցիալական հարցերով աշխատակցի հետ: Դուք կարող եք բերել վկաներ:²² Անձամբ հանդիպելը լավ գաղափար է, քանի որ այն թույլ է տալիս շահառուին բացատրություն տալ և պատասխանել սոցապ. աշխատակցի հնարավոր հարցերին: Պաշտոնական

¹⁹ POMS SI 04020.020B.2-3 Նախատեսված է, որ Դուք Ձեր նամակը կստանաք ծանուցումից հետո 5-օրյա ժամկետում: Եթե ժամկետը ավելի երկար է, քան 10 կամ 60-օրյա ժամկետը, Դուք կարող եք փորձել ներկայացնել Ձեր ուշացման «հարգելի» պատճառները: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁰ Դուք կարող եք գտնել վերանայման պահանջի օրինակը մեր տեղական գրասենյակում կամ կայքէջում՝ անցնելով հետևյալ հղմամբ՝ <http://www.ssa.gov/forms/ssa-561.pdf> ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²¹ POMS SI 02301.300C.7 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²² POMS SI 04020.050 Պաշտոնական խորհրդակցությունների ժամանակ Դուք իրավունք ունեք պահանջելու, որ ներկայանան վկաներ, անգամ եթե նրանք դա չեն ուզում: Մա կոչվում է դատարան ներկայանալու ծանուցում: Անգամ եթե Դուք չեք ցանկանում սկզբում դատարան ներկայանալու ծանուցում ուղարկել վկաներին, պաշտոնական խորհրդակցությունը Ձեզ թույլ է տալիս պահպանել այդ իրավունքը, եթե հետագայում ցանկանաք: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

խորհրդակցության ընթացքում շահառուն կարող է պատասխանել իրենց փաստաթղթում առկա մտահոգիչ հարցերին:

Եթե սոցապ.-ը մերժում է վերանայման Ձեր պահանջը, Դուք կարող եք դիմել վարչական իրավունքի դատավորին: Դուք պետք ներկայացնեք Ձեր բողոքը որոշումը կայացնելուց հետո 60 օրերի ընթացքում:²³ Ժամկետը երկարաձգելու պահանջ ներկայացնելու համար Դուք պետք է ունենաք հարգելի պատճառ: Երբեմն ՎԻԴ-ը կարող է Ձեզ տալ դատը շահելու ավելի մեծ հնարավորություններ, քան տեղի գրասենյակը: ՎԻԴ-ն ավելի հզոր է, ավելի լավ է տիրապետում օրենքին և ավելի շատ գործոններ կարող է մտապահել: Իրավաբանի ծառայություններից օգտվելը նույնպես կարող է օգտակար լինել շահառուի համար դատական լսումների ժամանակ: Եթե Դուք ներկայանում եք որպես փաստաբան, ավելի լավ է նախապես՝ 2 շաբաթ առաջ նամակով տեղեկացնեք այդ մասին ՎԻԴ-ին: Նամակը պետք է բացատրի այն բոլոր պատճառները, թե ինչու եք Դուք դիմել դատարան և թե ինչու պետք է դատավորը իր որոշումը հենց Ձեր օգտին կայացնի: Դուք կարող եք դատավորին ներկայացնել նաև այն ապացույցները, որոնք կցանկանաք, ինչպես, օրինակ, վերջին բժշկական ստուգման տվյալներն ու առողջական վիճակի գնահատականը: Կարևոր է ներկայացնել նոր ապացույցներ նախքան դատական լսումները:

Լսումների ժամանակ սոցապ.-ը իրավաբան չի ունենում: Փոխարենը ՎԻԴ-ը և փաստաբանը հնարավորություն կունենան շահառուին և վկաներին ուղղել հարցեր: Բացի շահառուների վկաներից ՎԻԴ-ը սովորաբար ունենում է հատուկ մասնագիտացված փորձագետ, շատ

²³ HALLEX I-2-0-60 (HALLEX-ը դատական լսումների համակարգ է, բողոքների և դատական իրավունքի մասին ձեռնարկ): Այն իր մեջ պարունակում է այն բոլոր կանոնները, որոնց պետք է հետևի սոցապ.-ը բողոքների ներկայացման գործընթացում: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

հաճախ նաև բժշկական փորձագետ: Թեև շահառուն իրավունք չի ունենալու նախքան լսումները ծանոթանալ փորձագետներից որևէ մեկի հաշվետվություններին, նա կարող է տեսնել փորձագետների ռեզյումեները:²⁴ Նրանք կարող են փորձագետներին հարցադրումներ անել իրենց աշխատանքային փորձի մասին:

Շատ կարևոր է հանգստացնել շահառուի նյարդերը նախքան լսումները: Սա Դուք կարող եք անել՝ բացատրելով ընթացակարգը: Դուք կարող եք նաև մի քանի հարցեր տալ և փորձել դրանց պատասխաններ գտնել:

Եթե Դուք համաձայն չեք ՎԻԴ-ի որոշման հետ, Դուք կարող եք բողոքարկել Բողոքարկման Խորհրդում (ԲԽ): Դուք պետք է ներկայացնեք Ձեր բողոքը ՎԻԴ-ի որոշման կայացումից հետո 60-օրյա ժամկետում:²⁵ ԲԽ-ն կարող է համաձայնել կամ ճհամաձայնել դիտարկել Ձեր հարցը: Նրանք կարող են փակել հարցը, մերժել կամ երաշխավորել բողոքը:²⁶ Եթե նրանք երաշխավորում են բողոքը, գործը կարող է հետ ուղարկվել ՎԻԴ-ին վերանայման: Սա հիմնականում բավականին ժամանակ է խլում:

Եթե ԲԽ-ն փակում է կամ հրաժարվում է ընդունել բողոքը, շահառուն կարող է բողոք ներկայացնել Դաշնային դատարան 60-օրյա ժամկետում:²⁷ Այս գործընթացը շատ ավելի բարդ է: Դուք պետք է խոսեք իրավաբանի հետ:

c. Հավելյալ վճարումների բողոքներ

Շահառուները հաճախ ստանում են նամակներ, որտեղ ասվում է, որ իրենց տրամադրվել է հասանելիք գումարից ավել գումար: Սրանք

²⁴ Տես՝ HALLEX I-2-1-30 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁵ HALLEX I-3-1-1 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁶ HALLEX Chapters I-3-4 through I-3-8 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

²⁷ HALLEX I-4-1-2 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

կոչվում են հավելյալ վճարումների մասին ծանուցումներ:²⁸ Այս ծանուցումները կարող են սթրեսի մեջ գցել շահառուներին, ովքեր իրենց հույսը դնում են ԵՆԱ-ի վրա՝ որպեսզի վճարեն իրենց կարիքների համար: Սոցապ.-ին անհրաժեշտ են այս ծանուցումներն այն դեպքում, երբ նրանք ցանկանում են իմանալ՝ արդյոք իրենք ավելի շատ գումար են փոխանցել շահառուի հաշվին, քան անհրաժեշտ էր: Այս նամակները կարող են պարունակել մոտ ժամանակների կամ անգամ տարիների առաջ արված վճարումների մասին տեղեկատվություն: Շահառուն պարտավորվում է հետ վերադարձնել գումարը միայն այն բանից հետո, երբ շահում է բողոքը կամ սոցապ.-ը հրաժարվում է գումարից: Նշանակություն չունի՝ որքան ժամանակ է անցել կամ արդյոք շահառուն արդեն ծախսել է գումարը թե ոչ: Բողոքարկման գործընթացը նույնն է, ինչ վերևում նկարագրված դեպքում, թեև պետք է հաշվի առնել այլ կետեր նույնպես:

Դուք պետք է շատ ուշադիր կարդաք ծանուցումները, քանի որ դրանք կարող են պարունակել սխալներ: Երբեմն-երբեմն շահառուները կարող են ցույց տալ, որ որոշակի ծախսերի պատճառով իրենց եկամուտը կրճատվել է:²⁹ Այս ծախսերը կարող են նշանակել, որ սոցապ.-ն իրենց տրամադրել է բավական չափով գումար:

Թույլատրելի ծախսերի նմուշներ

Շահառուն կարող է ունենալ այլ ծախսեր, ինպիսիք են բժշկական ծառայությունները, անձնական ծառայությունները կամ

²⁸ Ավելի մանրամասն տեղեկատվության համար կարող եք այցելել մեր [կայքէջ](http://www.disabilityrightsca.org/pubs/542101.html), <http://www.disabilityrightsca.org/pubs/542101.html>: (Վերադառնալ [հիմնական փաստաթղթին](#))

²⁹ Ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար այցելեք մեր [կայքէջ](http://www.ssa.gov/oact/cola/incomexcluded.html) <http://www.ssa.gov/oact/cola/incomexcluded.html>. (Վերադառնալ [հիմնական փաստաթղթին](#))

տեղափոխությունները: Սրանք թույլ են տալիս աշխատել՝ առանց հաշվարկելու ապագա եկամուտները:

Աշխատանքը խթանող մեկ այլ ծրագիր է PASS-ը: Այն թույլ է տալիս շահառուին գումար տնտեսել մասնագիտական պարապմունքների և այլ հատուկ ծախսերի համար: Սոցապ.-ը չի հաշվում այս գումարը, երբ յուրաքանչյուր ամիս կատարում է գումարի սահմանաչափի մեծացում:

Շահառուի կողմից հավելյալ վճարի ծանուցման դեմ բողոքարկելու առաջին քայլը վերանայման պահանջի ներկայացումն է: Դուք կարող եք նաև խնդրել «վերականգնել», քանի դեռ Դուք դիմել եք վերանայման խնդրով: Եթե Դուք այդպես անեք, սոցապ.-ը չի պահանջի հետ վերադարձնել հավելյալ գումարը, քանի դեռ դատական պրոցեսը չի ավարտվել: Եթե Դուք չեք ներկայացնում այդ պահանջը սոցապ.-ին, ապա նրանք հետ են գանձում հաջորդ ամսվա հավելյալ վճարը և այդպես այնքան ժամանակ, քանի դեռ հավելյալ գումարը հետ չի վերադարձվել: Դուք պետք է դիմումը **ներկայացնեք հավելյալ վճարի ծանուցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում**.³⁰ Եթե Դուք ժամանակին չեք ներկայացնում Ձեր բողոքը և չեք ներկայացրել հարգելի պատճառ ուշացման համար կամ եթե Ձեր բողոքը մերժվել է, ապա սոցապ.-ը կգանձի Ձեր գումարը տրամադրվող հաշվից: Հիմնականում գանձվում է ամսական տրամադրվող գումարի 10%-ը:³¹ Եթե այդքան գումարը կբավականացնի շահառուին, որպեսզի հոգա իր կարիքները, Դուք կարող եք խնդրել, որ գումարը վճարվի ամսական փոքր բաժիններով:³²

³⁰ Դուք կարող եք համառոտ շարադրել Ձեր բողոքի պատճառները ձևաթղթի տեսքով, որպեսզի կարողանաք ժամանակին ստանալ արձագանք: Հետագայում Դուք կարող եք ներկայացնել բողոքի մանրամասները: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

³¹ POMS SI 02220.016 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

³² POMS SI 02220.017A.1-2 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Եթե վերանայման պահանջը մերժվում է, Դուք կարող եք խնդրել անցկացնել լսումներ վարչական իրավունքի դատավորի հետ (ՎԻԴ) վերևում նկարագրված կարգով:³³

Եթե Ձեր բողոքը չի բավարարվում և առկա է հավելյալ վճարված գումար, Դուք կարող եք ներկայացնել «Հրաժարական պահանջ»: Հրաժարականի պահանջի ձևաթուղթը լրացնելուց հետո Դուք համաձայնում եք, որ շահառուն ստացել է սահմանվածից ավելի շատ գումար, սակայն չի պարտավորվում այն հետ վերադարձնել, քանի որ դա անարդար է:³⁴

IV. Ներկայացուցիչ: Վճարող

Ներկայացուցիչ վճարողը կարող է միայն օգնել շահառուին իր սոցիալական ապահովագրության ծախսերը հոգալու հարցում: Սա նշանակում է, որ ներկայացուցիչ վճարողը չի կարող շահառուի փոխարեն կայացնել իր առողջությանը վերաբերող որոշումներ կամ այլ ֆինանսական որոշումներ, որոնք ներառված չեն ՀԱԵ-ի մեջ: Եթե շահառուն գումար է ստանում այլ աշխատանքից կամ ընտանիքից, ներկայացուցիչ վճարողը կարող է և չկառավարել այդ ծախսերը: Նրանք չպետք է նաև նույն հաշվի վրա պահեն ոչ-ՀԱԵ գումար՝ ՀԱԵ-ի հետ միասին:

Ներկայացուցչականության օրինակ: Վճարողի պարտականությունները ոչ-ՀԱԵ-ի դեպքում

³³ Դուք կարող եք լսումների վերաբերյալ Ձեր պահանջի պատասխանը ստանալ տեղի գրասենյակից կամ [ստացանց՝ http://www.ssa.gov/forms/ha-501.pdf](http://www.ssa.gov/forms/ha-501.pdf): ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

³⁴ POMS SI 02260.001: Թե՛ վերանայման պահանջը և թե՛ հավելյալ գումարից հրաժարականի հետ կապված խնդիրները կարող են միևնույն ժամանակ ներկայացվել ՎԻԴ-ին: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Մեմբր ստանում է ամսական 1100 դոլար ՀԱԵ: Նա աշխատում է շաբաթական 3 օր տեղի նպարեղենի խանութում: Մեմբր նաև մեծ ժառանգություն է ստանալու իր հորից:

Մեմբի ներկայացուցիչ վճարողը պետք է կառավարի նրա ՀԱԵ-ն: Այնուամենայնիվ, նա պետք է տեղյակ պահի Մեմբին, որ վերջինս կարող է իր աշխատավարձը ծախսել այնպես, ինչպես ինքն է ցանկանում: Աշխատավարձը կապ չունի ՀԱԵ-ի հետ: Մեմբր կարող է նաև իր ցանկությամբ տնօրինել իր ժառանգությունը առանց ներկայացուցիչ վճարողի:

Այնուամենայնիվ, ներկայացուցիչ վճարողը պետք է անպայման սոցիալական ապահովության կենտրոնին տեղեկացնի Մեմբի աշխատավարձի և ժառանգության մասին, երբ նա ստանա դրանք: Ներկայացուցիչ վճարողը պետք է օգնի Մեմբին ծախսել իր ժառանգություն ստացած գումարն այնպես, որ կարողանա բավարարել իր բոլոր կարիքները: Այսպիսով Մեմբր շատ դրամական ռեսուրսներ չի ունենա: Եթե ունենա, կարող է ստանալ հավելյալ գումար:

Եթե Մեմբր չկարողանա ժամանակին ծախսել գումարը, նրա ներկայացուցիչ վճարողը ստիպված է լինելու կազմել խնամառության հատուկ ցուցակ: Այն պետք է կազմվի ինչ-որ երրորդ անձի կողմից: Եթե խնամառության ցուցակը ճիշտ է կազմված, դրանում ներկայացված գումարը չի ազդի Մեմբի ՀԱԵ-ի վրա:

V. Ինչպե՞ս եմ ես կառավարում շահառուների ֆոնդերը:

Ներկայացուցիչ վճարողը շահառուի ՀԱԵ-ն կարող է պահպանել կա՛մ անձնական կա՛մ ընդհանուր բանկային հաշվի վրա: Այնուամենայնիվ, ընդհանուր հաշիվները ունեն հատուկ կանոններ (տես ներքևում):³⁵ Այս հաշիվները չպետք է գումար գանձեն շահառուների վճարներից: Եթե հաշիվներն ունեն վճարներ կամ բանկային մուծումներ, Դուք պետք է աշխատեք բանկի աշխատակցի հետ, որպեսզի չեզոքացնեք դրանք:

³⁵ POMS GN 00603.020 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Ապառիկ տրամադրող միավորումները կամ փոքրիկ տեղական բանկերը հիմնականում պատրաստակամ են չեղարկելու վճարները:

Նախքան բանկային հաշիվ բացելը, նկատի ունեցեք հետևյալը.

1. Դուք պետք է տեղյակ լինեք շահառուի յուրաքանչյուր ծախսից՝ գրանցումներ կատարելու միջոցով:
2. Եթե հաշիվը կուտակում է տոկոսներ, Դուք պետք է կարողանաք յուրաքանչյուր շահառուին մուծել տոկոսներ՝ կախված հաշվին առկա գումարի չափից:
3. Յուրաքանչյուր շահառու կարող է օգտագործել միայն իր գումարը:
4. Շահառուները չպետք է ունենան դեբետային քարտ՝ հաշիվ մուտք գործելու համար և
5. Սոցապ.-ը պետք է վերանայի և հաստատի ընդհանուր հաշիվը գրավոր տեսքով:

Անհատական հաշիվը կարող է պարունակել միայն մեկ շահառուի ՀԱԵ: Եթե Դուք ներկայացուցիչ վճարող եք մի քանի շահառուների համար, անհատական հաշիվների օգտագործումը լավագույն եղանակն է յուրաքանչյուրի գումարն ու հաշվեկշիռը հսկողության տակ պահելու համար:

Եթե Դուք ներկայացուցիչ վճարող եք շատ շահառուների համար, Դուք կարող եք նրանց ՀԱԵ-ն պահել ընդհանուր հաշվի վրա: Ընդհանուր հաշիվը աշխատում է որպես միացյալ հաշիվ, որտեղ բոլոր շահառուների համար գործում է մեկ հաշվեհամար: Եթե Դուք օգտագործում եք նման հաշիվ, ապա պետք է համոզված լինեք, որ յուրաքանչյուր շահառու օգտվում է միայն իր գումարից: Յուրաքանչյուր շահառուի ծախսերը պետք է գրանցվեն առանձին: Նաև, Դուք կարող եք չօգտագործել այս հաշվի վրա եղած գումարը Ձեր իրավասությունների կատարման վճարը գանձելու համար: Օրինակ՝ Դուք չեք կարող օգտագործել այս գումարը Ձեր փոստային կամ գրասենյակային ծախսերի համար:

Դուք կարող եք դեբետային քարտեր հանձնել անհատական հաշիվներ ունեցող շահառուներին: Այնուամենայնիվ, դեբետային քարտը պետք է սահմանափակված լինի ԱՊ ծախսերով, որը նախապես համաձայնեցվել է շահառուի հետ: Այս սահմանափակումն օգնում է շահառուին զերծ մնալ հավելյալ վճարումներից, եթե շահառուն փորձում է կանխիկացնել ավելի շատ գումար, քան կա քարտի վրա:

Երբեք չպետք է շահառուների գումարը պահել կանխիկ գումարի տեսքով փակվող դարակում: Փակ դարակից վերցված գումարները դժվար է հաշվել, ինչը շահառուների հաշվեկշռի կառավարումն ավելի է դժվարացնում: Հավելենք, որ փկ դարակը ստեղծում է բարենպաստ պայմաններ գողության համար, քանի որ ցանկացած մարդ կարող է գտնել բանալին և գողանալ գումարը:

a. Հաշիվների անունները

Հաշիվը, լինի դա ընդհանուր թե անհատական, պետք է վերնագրում նշի, որ այն պատկանում է այս հաշվառուին: Դուք կամ Ձեր կազմակերպչական աշխատանքները միայն կառավարում են այդ հաշիվը: Միայն Ձեր անունով գրանցված հաշիվը ընդունելի չէ:³⁶

Ընդհանուր առմամբ, անվանումը պետք է հուշի, որ հաշիվը ընդհանուր է կամ անհատական և կառավարվում է ներկայացուցիչ վճարողի կողմից:

Բանկային հաշվի անվանման օրինակներ.

Միայլ է. “Homestead Rep. Վճարողի միացյալ հաշիվ

Ճիշտ է. Շահառուի սոցիալական ապահովագրության հաշիվ, որը կառավարվում է Homestead Rep. Payee Inc.-ի կողմից:

“Homestead Rep. Payee Inc., պատկանում է սոցիալական ապահովագրություն ունեցող շահառուների

³⁶ POMS GN 00603.010 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Սոցիալական ապահովության շահառու Սեմ Քեթ. Վճարողի վստահելի հաշիվ

Ե. Հաշիվների խառնում

Ընդհանուր առմամբ, ներկայացուցիչ վճարողը չպետք է շահառուի ՀԱԵ-ն պահի ոչ շահառուական գումարի հետ միևնույն հաշվի վրա: Ոչ շահառուական հաշիվը կարող է լինել բիզնես հաշիվ կամ կարող է պատկանել այնպիսի մարդկանց, որոնք կարիք չունեն ներկայացուցիչ վճարողների: Այս փորձառությունը կոչվում է «հաշիվների խառնում»:³⁷ Եթե Դուք խառնում եք հաշիվները, դա համարվում է շահառուական հաշիվների սխալ կառավարում: Սա կարող է դիտվել որպես խարդախություն: Եթե այն դիտվում է որպես խարդախություն, նրանք կարող են աուդիտի ենթարկել կամ հարցաքննել Ձեզ:

Հաշիվների խառնումը կարող է ազդել այլ եղանակներով:

Ընդհանրապես, շահառուի առնվազն 2 ամսվա ՀԱԵ-ն ապահովագրված է պարտատերերից:³⁸ Այնուամենայնիվ, եթե Դուք խառնել եք ՀԱԵ-ն այլ գումարի հետ, Դուք կդժվարանաք տարանջատել դրանք: Շահառուն կարող է մնալ անպաշտպան: Շահառուի կամ վճարողի պարտատերը կարող է ՀԱԵ-ից գանձել իրեն պարտք գումարը:

Սա կարող է պատճառ հանդիսանալ նաև կրկնակի վճարումների: Դիցուք, Դուք ՀԱԵ-ն պահում եք Ձեր անձնական գումարի հետ միևնույն հաշվի վրա: Սոցապ-ը կարող է կարծել, որ ներկայացուցիչ վճարողին պատկանող գումարը նույնպես պատկանում է շահառուին, ինչը գերազանցում է ռեսուրսների առավելագույն չափը: Սոցապ-ը կարող է գանձել հավելյալ գումար:

Դժվար է ընդհանուր հաշվի վրա գտնվող գումարը բաժանել սեփական և ՀԱԵ հաշիվների: Դուք սխալմամբ կարող եք շինարարական

³⁷ POMS GN 00603.010 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

³⁸ 42 U.S.C. § 407 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

աշխատանքների կամ անձնակազմի աշխատավարձերի գումարը պահել շահառուի հաշվին: Դուք երբեք չպետք է օգտագործեք շահառուի գումարը՝ այդ ծախսերը հոգալու համար:

Կ. Կապող վճարողի պրակտիկա

Այս պրակտիկան օգտագործվում է, երբ ներկայացուցիչ վճարողը շահառուի գումարն օգտագործում է կա՛մ շահառուի, կա՛մ երրորդ կողմի համար: Երրորդ կողմը կարող է լինել ֆիզիկական անձ կամ

կազմակերպություն: Մոցապ. կառավարությունն ընդհանրապես չի խրախուսում այս պրակտիկան: Կապող վճարող լինել նշանակում է այլևս չլինել ներկայացուցիչ վճարող:³⁹

Այս պրակտիկան շատ հաճախ կիրառվում է, երբ շահառուն ապրում է ներկայացուցիչ վճարողից մեծ հեռավորության վրա: Սա կարող է տեղի ունենալ այն ժամանակ, երբ շահառուն ապրում է հանրակացարանում կամ օգտվում անհատական բնակատեղիի ծառայություններից: Ներկայացուցիչ վճարողը, որն ապրում է հեռու, ստորագրում է ամսական ողջ ՀԱԵ կտրոնի տակ: Իսկ երրորդ կողմը պետք է լինի հանրակացարանի տնօրենը կամ անհատական բնակատեղիի ապահովողը: Այնուհետև երրորդ կողմն այդ գումարով վճարում է բնակվարձի և այլ ծախսերի համար, իսկ մնացած գումարը որպես ԱՊ ծախսերի գումար հանձնում է շահառուին:

Հնարավոր խնդիրներ վճարումը ստացողի ուղեկցմամբ:

Ֆրենկը, որ Մեմի ներկայացուցիչ վճարողն է, ապրում է 50 մղոն հեռու: Մեմը ապրում է հանրակացարանում: Մեմն ապրել է այնտեղ 10 տարի: Նա լավ հարաբերություններ ունի այնտեղի տնօրենի՝ Ադամի հետ: Ֆրենկը և Մեմը հազվադեպ են հանդիպում, քանի որ մեծ հեռավորություն է նրանց բաժանում:

³⁹ POMS GN 00608.044; POMS GN 00605.066 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

Ամեն ամիս Ֆրենկը Ադամին է ուղարկում Մեմի 1100 դոլարի չեկը ՀԱԵ-ից: Ադամն օգտագործում է 1000 դոլարը՝ վճարելու հանրակացարանի վարձերը: Այնուհետև գումարի մնացած մասը (100 դոլար) հանձնում է Մեմին որպես ԱՊ ծախսերի գումար: Ֆրենկը չի նշում, թե երբ և ինչպես է Ադամը Մեմին տալիս ԱՊ ծախսերի գումարը:

Տարվա վերջում Ֆրենկը զանգահարում է Մեմին: Նա պարզում է, որ Մեմը ամեն ամիս որպես ԱՊ ծախսեր ստացել է ընդամենը 60 դոլար: Մեմը Ադամի հետ քիչ է խոսել իր բյուջեի մասին: Ադամը Ֆրենկին ասում է, որ ինքը չգիտի, թե ուր է կորել ամսական 40 դոլարը: Նա երբեք չի գրանցել իր հաշիվները գրանցամատյանում:

Մեկ տարի անց այլևս անհնար է պարզել, թե ուր է կորել Մեմի ամսական 40 դոլարը: Արդյունքում Մեմը դարձել է խաբեության զոհ: Նա չի կարողացել իր գումարը ծախսել իր կարիքների համար, քանի որ ինչ-որ մեկը գողացել է դրանք:

Որպես կապող, ներկայացուցիչ վճարողը չի կառավարում շահառուի ՀԱԵ-ն: Փոխարենը իր պարտականությունն անցնում է այն կողմին, որը կարողանում է հետևել գումարային շարժին: Շահառուն չի կարող աշխատել իր ներկայացուցիչ վճարողի հետ՝ գումարը կառավարելու և սեփական կարիքները բավարարելու հարցով: Այս պրակտիկան իր մեջ ներառում է սխալ կառավարման, խաբեության կամ գողության ռիսկեր:

Սակայն սոցապ. կառավարումը միշտ չէ, որ արգելում է նման պրակտիկան: Եթե թույլատրում է, ապա պետք է տրամադրի նաև մատչելի գրավոր հրահանգներ երրորդ կողմի համար, թե ինչպես է պետք կառավարել շահառուի հաշիվները: Ներկայացուցիչ վճարողը պետք է նաև հաճախակի կապի մեջ մտնի շահառուի հետ:⁴⁰

Եթե Դուք կապող դեր եք կատարում երրորդ կողմի հետ, մտածեք այն մասին, թե արդյոք երրորդը կողմը պետք է դառնա ներկայացուցիչ վճարող: Սա կարող է առավելագույնս արդյունավետ լինել, եթե երրորդը

⁴⁰ POMS GN 00605.066 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

կողմը գիտի շահառուին շատ լավ և մշտապես կապի մեջ է նրա հետ: Եթե Դուք կատարում եք կապող դեր, քանի որ ապրում եք շահառուից հեռու, մտածեք շահառուին օգնելու մասին, որպեսզի նա իր համար գտնի մեկ այլ ներկայացուցիչ վճարող: Դուք նաև պետք է օգնեք շահառուին դառնալ իր սեփական ծախսերի տնօրինողը, եթե, իհարկե, նա ի վիճակի է:

Մեմն ասում է Ֆրենկին, որ ինքը պատրաստ է ստանձնել իր սեփական ծախսերի կառավարումը: Ֆրենկը համաձայնում է: Նա Մեմի հետ կազմում է ծրագիր, ըստ որի նա պետք է կառավարի իր ծախսերը:

Ֆրենկն ավելացնում է Մեմի ԱՊ ծախսերը՝ ասելով, որ դրանք պետք է ծախսվեն միայն բնակավարձի և կրթության համար: Մեմը պետք է նաև մի փոքր գումար պահի իր խնայողությունների համար: Ֆրենկը մնացած գումարը դնում է Մեմի անհատական բանկային հաշվի մեջ և վերահսկում նրա ծախսերը:

Ֆրենկը նաև օգնում է Մեմին իր ընկերների, թերապիստների ու բժիշկների հետ նամակագրության հարցում, ովքեր օգնում են նրան՝ դառնալ իր սեփական նորկայացուցիչ վճարողը: Նրանք գրում են, որ Մեմն արդեն ավելի լավ է կարողանում ղեկավարել իր սեփական գումարը: Որպես օրինակ՝ նրանք խոսում են, որ սեմը մեծ պատասխանատվությամբ կարողացել է կրճատել իր ամսական ԱՊ ծախսերը՝ գնելով ավելի քիչ քաղցրավենիք: Արդյունքում նրա շաքարային դիաբետը նահանջել է:

VI. Օգնություն շահառուին՝ դառնալու իր սեփական ներկայացուցիչը

Ներկայացուցիչ վճարողը պետք է գիտակցի՝ արդյոք շահառուն կարող է կառավարել իր ծախսերը: Այս նպատակին հասնելու համար շահառուն պետք է հանդես գա իր ինքնուրույն ծրագրով: Օրինակ՝ Դուք պետք է շահառուին վստահեք իր սեփական ծախսերը հոգալու պարտականությունը: Միևնույն ժամանակ Դուք պետք է համոզվեք, որ շահառուն կարողանում է կատարել իր պարտականությունները:

Ներկայացուցիչ վճարողը պետք է աշխատի նաև տեղական վստահելի գործարարների հետ, որպեսզի կարողանա օգնել շահառուին իր ֆինանսական գործարքների հետ:

Շահառուի հանդեպ չափազանց մեծ ֆինանսական հսկողությունը կարող է համարվել որպես կապող դեր կատարող վճարողի պրակտիկա:

Սոցապ. կառավարման կենտրոնը կարող է մտածել, որ Դուք այլևս չեք կատարում Ձեր պարտականությունները որպես ներկայացուցիչ վճարող: Այս ամենը կանխելու համար Դուք պետք է ունենաք հստակ գրավոր ծրագիր, որտեղ ասվում է, թե ինչպես պետք է աշխատի շահառուն՝ իր գումարը ծախսելու գործում:

Հավաքեք ապացույցներ այն մասին, որ շահառուն կարող է տնօրինել իր սեփական գումարը: Ընկերները, ընտանիքը, թերապիստները և անգամ տեղացի բիզնեսմենները կարող են օգնել նրան այս հարցում: Նրանք կարող են գրել պաշտոնական հաղորդագրություններ, որոնք կփաստեն շահառուի՝ իր գումարը տնօրինելու կարողության մասին:⁴¹

Այնուհետև կապվում են սոցապ. կառավարության գրասենյակի հետ, եթե շահառուն ցանկանում է դառնալ իր սեփական ներկայացուցիչը: Խնդրեք նրանց վերանայել այն հանգամանքը, թե արդյոք շահառուն կարողանում է կառավարել իր ՀԱԵ-ն:⁴² Կազմեք գրավոր փաստաթուղթ և կցեք բոլոր պաշտոնական հաղորդագրությունների պատճենները:

⁴¹ POMS GN 00502.050 ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

⁴² Բացեք սույն փաստաթղթի էջ 22-ը՝ Ձեզ անհրաժեշտ ձևաթղթի համար: Դուք պետք է կապվեք Ձեր տեղական սոցապ. գրասենյակի հետ՝ գնահատական ստանալու և ձևաթուղթն անձամբ լրացնելու համար: ([Վերադառնալ հիմնական փաստաթղթին](#))

VII. Ձեր ներկայացուցիչը: Վճարողի ծառայությունը շատ անհրաժեշտ է:

Ձեր՝ որպես ներկայացուցիչ վճարողի դերը շատ կարևոր է շահառուի համար: Ձեր ճիշտ կառավարումը կարող է օգնել շահառուին գնել անհրաժեշտ իրերն ու խնայել գումար: Շահառուին նման օգնություն ցուցաբերելը բխում է իրենց շահերից ու ավելացնում նրանց ինքնուրույնությունը: Ձեր դերը շատ կարևոր է նրան խնայելու, հաշվարկելու և խնայողություններ կատարելու, ինչպես նաև լավագույն պայմաններով գնումներ կատարելու հարցում: Շնորհակալություն:

Հավելված SSA

Բողոքարկում առաջին անգամից

Նախնական որոշումներ

Եթե Դուք համաձայն չեք «նախնական որոշումների» հետ, դուք պարտավոր եք պաշտպանել շահառուի շահերը դատարանում: Նախնական որոշումների մեջ են մտնում իրավասությունները, հաշվեկշիռը, կրկնակի վճարումներ և մերժումները՝ սեփական ներկայացուցիչը դառնալու գործում:

Ծանուցումը ստանալու պահից հետո 60 օրվա ընթացքում անհրաժեշտ է ներկայացնել բողոքը: * **(10 օր**՝ խնդրելու համար շարունակել ամբողջական վճարումը նախնական բողոքարկման ժամանակ).

Վերանայում

- Սոցապ. կառավարության տեղական գրասենյակի անձնակազմը կարող է որոշում կայացնել բողոքի մասին:
- Դուք կարող եք խնդրել խորհրդակցություն հրավիրել՝ լսումներն իրականացնող պաշտոնյայի հետ կամ պարզապես վերանայել միայն փաստաթղթերը: Դուք կարող եք ներկայացնել նոր վկաներ և փաստեր:
- Վերանայման պահանջը ներկայացնելիս օգտվեք SSA-561 կամ SSA-789 ձևաչափից կամ ներկայացրեք Ձեր նամակը տեղական գրասենյակ:

Վերանայման որոշման մասին
ձանուցումը ստանալուց հետո 60
օրերի ընթացքում սկսեք
պատրաստել Ձեր
փաստաթղթերը:

Լսումներ

- Օգտվեք HA-501 ձևաչափից կամ գրեք նամակ Ձեր տեղական գրասենյակ:
- Բողոքը կղիտարկվի վարչական իրավունքի դատավորի (ՎԻԴ) կողմից Կատարման և Վերանայման տեղական գրասենյակի (ԿՎԳ) կողմից:
- Դուք կարող եք խնդրել ներկայացնել թղթային վերանայումներ, եթե խնդիրը պարզ է: Եթե այն երաշխավորված չէ, Դուք մասնակցելու եք լսումների:
- ՎԻԴ-ը կարող է հրավիրել մասնագետ փորձագետների և/կամ բժշկական փորձագետների: Դուք կարող եք բերել վկաներ և ներկայացնել նոր փաստեր:
- Նամակների և համառոտագրերի ներկայացումն ավելի բարենպաստ է ներկայացնել նախքան լսումները:

Լսումների որոշման մասին
ճանուցումը ստանալուց հետո 60
օրերի ընթացքում սկսեք
պատրաստել Ձեր
փաստաթղթերը:

Բողոքարկման խորհուրդ

- Բողոքը կղիտարկվի Վիրջինիայի Բողոքարկման խորհրդում (ԲԽ) առանց լսումների:
- ԲԽ-ն կերաշխավորի, կմերժի կամ կփակի Ձեր պահանջը՝ առանց ուշադրություն դարձնելու դրա կարևորությանը:

- Օգտվեք HA-520 ձևաթղթից կամ գրեք նամակ Ձեր Կատարման և Վերանայման տեղական գրասենյակին:
- Եթե Դուք չունեք ժամանակ վերանայման պահանջի համար նամակ կամ նոր փաստարկներ ներկայացնելու համար, Դուք կարող եք ներկայացնել գրավոր պահանջ՝ փաստարկներ ներկայացնելու համար հավելյալ ժամանակի խնդրանքով:

Ծանուցումը ստանալու պահից
հետո 60 օրվա ընթացքում
անհրաժեշտ է ներկայացնել
բողոքը:

Դաշնային դատարան

- Ձեր բողոքը կդիտարկվի Ամերիկայի շրջանային դատարանի դատավորի կողմից առանց լսումների:
- Այս գործընթացը շատ ավելի պաշտոնական է: Դուք պետք է ստուգեք Ձեր տեղի դատական կանոնները:
- Շրջանային դատարանում պետք է կատարել վճարումներ: Եթե շահառուն չի կարողանում վճարել ծախսերի համար, նա կարող է ներկայացնել գրավոր պահանջագիր:
- Որոշումը կկայացվի գրավոր պահանջի հիման վրա, որի մեջ կներառվեն բոլոր ներկայացված ցուցմունքները և բողոքները: Դուք կարող եք ներկայացնել նաև պաշտոնական իրավական նամակ՝ ի պաշտպանություն Ձեր բողոքի

Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքները հիմնված են տարբեր
աղբյուրների վրա: Մատակարարների ամբողջական ցուցակին
ճանոթանալու համար կարող եք այցելել մեր կայքէջ՝
<https://www.disabilityrightsca.org/pod/list-of-funding-grants-and-contracts>.